ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-17-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
Հակոբ Վարդանյան
Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալներ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019թ. դեկտեմբերի 15-17-ը:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
ԵՄ-ՀՀ Գործընկերության կոմիտեի 2-րդ հանդիպումը ԵՄ-ՀՀ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում հերթական հանդիպումն է:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
Հանդիպումը նախատեսված էր քննարկելու Համաձայնագրի կատարման ընթացքը, որը կարևոր դերակատարում ունի ՀՀ կառավարության բարեփոխումների իրականացման գործում: Գործընկերության կոմիտեն քննարկեց նաև ՀԸԳՀ-ի իրականացման ընթացքը տրանսպորտի և էներգետիկայի բնագավառներում՝ ուղղորդելով դեպի հետագա առավել մանրամասն փորձագետների մակարդակով քննարկումների կազմակերպմանը, ԵՄ-Հայաստան էներգիայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, կլիմայի գործողության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ենթակոմիտեի շրջանակում, որը տեղի կունենա 2020 թվականի մարտին Երևանում:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Հանդիպումը համանախագահում էին Արտաքին գործողության եվրոպական ծառայության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գծով գլխավոր տնօրենի տեղակալ Լյուկ Դևինը և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ավետ Ադոնցը: Հանդիպման ընթացքում էներգետիկայի ոլորտին առնչվող մի շարք թեմաներից զատ քննարկվեց նաև ՀԱԷԿ-ի փակման կամ ապամոնտաժման հետ կապված հարցերը և հայկական կողմը ներկայացրել

է, թե ինչ գործընթացով և ճանապարհային ինչ քարտեզով է պետք ապահովել այդ հարցի ամբողջական լուծումը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպման ընթացքում քննարկվել է «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) ծրագրի իրականացման ընթացքը: ՀՀ ՏԿԵՆ նախարարի տեղակալ Հ. Վարդանյանը ներկայացրել է վերջին տարիների էներգետիկայի բնագավառում իրականացվող մի շարք ծրագրեր և զեկուցել է կատարված աշխատանքների մասին:

Տրանսպորտի ոլորտին առնչվող թեմաներից հայկական կողմից ներկայացվել է ՀԸԳՀ շրջանակներում մի շարք կետերի կատարման ընթացքը և դրանց կատարման եղանակների մասին զեկուցել է ՀՀ ՏԿԵՆ նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանը: Վերջինս նշել է, որ 19-րդ և 20-րդ կետերի կատարման նպատակով բանակցություններ են տարվում ռուսական Պլատոն համակարգի ներկայացուցիչների հետ Հայաստանի Հանրապետությունում ճանապարհային վճարի գանձման էլեկտրոնային համակարգ ներդնելու ուղղությամբ: Նախարարի տեղակալը տեղեկացրեց, որ 23-րդ կետի կատարման նպատակով ներպետական ընթացակարգեր է անցել «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագիրը և այն ներկայացվել է վարչապետի աշխատակազմ՝ Ազգային ժողովի վավերացմանը: Համաձայնագրի վավերացումից հետո ավտոմոբիլային տրանսպորտով կմշակվեն վտանգավոր բեռների փոխադրումների գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերը և սահմանված կարգով կներկայացվեն Կառավարության քննարկմանը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման ժամանակ որոշումներ չի ընդունվել, և առաջարկվել է ծագած հարցերը և խնդիրները քննարկել ենթակոմիտեի նիստի ընթացքում:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկվեցին օրակարգում ներառված մի շարք հարցեր, և դրանց իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Նշվեց, որ համաձայնագրի դրույթների համաձայն, ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման գործընթացն օժանդակելու նպակատով կիրառվող TAIEX ծրագրի

շրջանակներում 2020թ. փետրվարի 17-ին նախատեսվում է ԵՄ փորձագետների ժամանումը Հայաստանի Հանրապետություն:

10. <u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ</u> 20.12.2019թ